անորոշութիւն է տիրում։ Առհասարակ անորոշութիւնը հեղինակի գրուածքում խիստ աչքի է ընկնում։ Մի երկու երեք խօսքով անձնաւորութեան նկարագիր է տալի, մի դէպք թեթեակի յիշում և այն էլ առանց պատճառաբանութեան, առանց պարզելու դէպքի կարևորութիւնը ամբողջութեան համար։

Հեղինակի գլխաւոր թերութիւնը հէնց այդ կիսատ պռատ նկարագրելու մէջն է, որից առաջ է գալի այն, որ գրուածքում հանդիպում են կտորներ, որոնք եթէ հանուեն, վէպը իր գոյնն ու բովանդակութիւնը կպահէ այդ կտորները կարծես միայն միջանկեալ տեսարաններ են։ Ընդհանրապէս հեղինակը տեսարաններ է նկարագրում աւելի, քան մի ամբողջ նիւթ մշակում սկզբից մինչև վերջը կապակցուած կերպով։ Երևում է, որ գիտէ հարցեր շօշափել, նորութիւն տալ ընթերցողին, այլ և լինել բնական, պարզ ոճով ու հեռու զանազան արուեստական ձևերից ու խժողումներից։

Բայց նրա միտքը չափազանց արագ է գործում գրչից, ուստի թղթի վրայ երևում է միայն մտքում եղածի գրեթէ կէսը, ուստի և ընթերցողը այն չէ ստանում ինչ որ հեղինակն ունեցել է իր մտքում։ Նրան պակասում է ոչ միայն վարժութիւն՝ գրիչը մտքի չափ արագացնել կամ աւելի լաւ է ասել գրիչը մտքի ճիշտ որքան կարելի է արտայայտողը դարձնել, այլ և ձեռք բերել դիտողութիւն. մեր գրողների մէջ ընդհանրապէս կեանքը իր մանրամասնութիւններով լաւ դիտելու յատկութիւնը պակասում է. առաւել ևս այդ նկատելի է սկանակի գրուածքում։ Գրողին թւում, է թէ որ ինքը հասկանում է, ընթերցողն էլ իր նման կհասկանայ ամեն ինչ։ Նա պէտք է նկարչի նման կարողանայ սուր դիտողութեամբ բնութեան մէջ այնպիսի գոյներ այնպիսի ներդաշնակութիւններ տեսնել, որ սովորական մարդու աչքից վրիպում են։

Թորոսեանը շտապում է իր պատմութիւնն անել, երբեմն էլ աւելորդ մանրամասնութիւններ է մտցնում, որոնցից եթէ խուսափէ, գրուածքը աւելի արժէք կստանայ։ Մանաւանդ ցանկալի է, որ սիրոյ, բնութեան նկարագրներում հին ռոմանտիկ ձևերից խուսափէ, որովհետև այդ մեր ժամանակի ոգուն չեն համապատասխանում. սոխակ, կարկաչուն առու, լուսին, անտառ և այլն (97, 103. 120- 2 եր.)։ Անհրաժեշտ է, որ հեղինակը լաւ ծրագրէ գրուածքը, ինքն իր համար պարզէ էականն ու երկրորդականը և հարցը շօշափելիս նիւթը մշակ է։

Տեխնիկականի կողմից անհրաժեշտ է սրբագրութեան վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել. թէ այս վէպը, թէ նրա մի ուրիշ վէպը (Հին տանը) տառասխալներ, ուղղագրութեան սխալներ շատ կան։

Գրուածքի առաւելութիւններից է և այն, որ սահուն ոճով է գրուած, թեթև կարդացւում է, նիւթը խճողուած չէ մտածածին տեսարաններով ու դէպքերով։ Սկանակի թերութիւնների հետ առաւելութիւններ էլ ունենալով, հեղինակը կաշխատէ անշուշտ իր յետագայ աշխատութիւններում հեռացնել կրճատել իր անփորձութիւնից առաջացած պակասութիւնները, որպէսզի ունեցած ընդունակութիւնը աւելի պարզ ու լրիւ հանդէս բերէ։

Pessimist

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայոց գրերի գիւտի 1500 ամեակի և տպագրութեան 400 ամեակի առթիւ Ն. Սրբութեան կարգադրութեամբ կազմուած և հաստատուած է խմբագրական մի մանաժողով, որի վերայ պարտաւորութիւն է դրուած մի գիտական ժողովածու հրատարակել միացեալ երկու մեծ տօներին վայել լրջութեամբ և ճոխութեամբ։ Ժողովածուի նիւթ պէտք է լինի ընդարձակ մտքով հասկացուած հայագիտական ամեն մի յօդուած, այսինքն հայ պատմութեան, մատենագրութեան, լեզուի, հնագիտութեան և արուեստի, աշխարհագրութեան, ազգագրութեան ևն. վերաբերեալ, որ կընդունուի խմբագրական մանաժողովի կողմից։ Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւելի, քան երկու տպագրական թերթ 160։ Իւրաքանչիւր երեսի համար նշանակուած է մի բուբլի վարձատրութիւն։ Այսու Մ. Աթոռի կարող միաբաններից և Ճեմարանի ուսուցիչներից զատ՝ հրաւիրւում են և դրսի հայ բանասէրները մասնակցելու մեր կազմիլիք ժողովածուին։ Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան հոկտեմբերի վերջը։ Ընդունուած յօդուածները հեղինակների ցանկութեան համեմատ յետ կուղարկուին իրենց։

Խմբագրական Մանաժողովի
փոխ Նախագահ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Քարտուղար՝ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ